Իր գործունեյությունն ե ծավալում նաև «Գրուզնեվթը»: Հետախուզությունները վրաստանի սահմաններում յերկան բերին 56 նավթահանք: Նրանցից միայն կախեթիայի շրջանի 4—5 նավթահանքները: Նավթից մաշարը կազմում է 110 մելիոն տոննու:

Զիարսուրի մարգանեցը: Մենչեւկների ժամանակ մարդանեցի հանուլիս տարվանը առաջանակ 25-ից մինչև 100 հանուլիս տարվանի միջև: Հարրիմանի կոնցեսիան հանույթը հասցրեց զար տոննի մաշտականի միջև: Հարրիմանի կոնցեսիան հանույթը հասցրեց 300—350 հազ. տ.: Այս տարի Զիարտուրը կտա 600 հազար տոնն ապրանքային արտադրանք, իսկ մյուս տար առ համար կազմված է 900 հազար տոննի պլան:

Զիարտուրի մարդանեցի բազայի վրա Զետաֆոնիում աճեց գերբումարդանեցի խոշոր զարձարանը:

Ածխարդյանաբերերությունը վրաստանում զարգանում է Ածխարդյանաբերերությունը և Ախալցխայում: Այժմ Տղվիրությունը տարեկան ստացվում է 200 հազար տոնն քարածուխ:



Քիմ. շինք

Քութայիսի շուրջն աճեց արդյունաբերական նոր շրջան։ Քութայիսի բարիքը գնում և Բազու, Գրողնի, Դերբենտ։ Քութայիսի գումբրինն ապահովում և նավթամթերքի զառումը ԽՍԽՄ-ի ամբողջ նավթարդյունաբերության մեջ, փոխարինելով տռաջ Ամերիկայից ներմուծվող ֆլուիդներ։ Քութայիսի լիտոպոնի գործարանը տարեկան կտա 12 հազար տոնն լիտոպոնի սպիտակը, վորն անհրաժեշտ ե ուստինի, ցելլուլոզի և քիմիական արդյունաբերության այլ ճյուղերի համար։ Քութայիսում գործարկվեց պահածոների մի գործարան՝ 20 մելիոն տուփ բանջարեղենի ու մսի արտադրականությամբ։

Վրաստանում զարգանում են նաև թեթև արդյունաբերության մի շարք ճյուղեր՝ մահուդի, կար ու ձեի, սնունդ-համի, կաշվեղենի ու գոտնամանների, թղթի և այլ ճյուղերը։ Բավական ե, յեթե բերենք հետեւյալ տեղեկանքը։ —պատերազմից առաջ Վրաստանի ամբողջ արդյունաբերությունը տալիս եր 80 մելիոն ոռոբու արտադրանք, իսկ 1933 թվականին՝ 337 մելիոն ոռոբու արտադրանք։

Վերածնության ավելի մեծ հրաշքներ տեղի ունեցան Հայաստանում։ Հայաստանը քարի յերկիր և Հրաբուխները, լեռնաստեղծ պրոցեսներն այստեղ կուտակել են անթիվ, անհամաց տեսակ քարեր։ Այդ քարերը դարձեցից ի վեր լուռ եյին, Բայց այժմ Խորհրդային Հայաստանի քարերը խոսեցին։

Անիի պեմզայի հանքերը պեմզա յեն մատակարարում ամբողջ Միությանը։ Արթիկի տուփը մի հիմնալի շինանյութ և, վորով պատած ե Դնեպրի հիդրոկայանի շենքի յերեսը և այժմ պատում են թեթև Արդյունաբերության Ժողկումատի շենքի յերեսը Մոսկվայում, Մյասնիցկայա փողոցում, — նույնպես բերված ե Հայաստանից։

Բազալտ ձուլելու փորձերը հիմնալի արդյունքներ նվազած բազալտը մի դանձ է քիմիական ու ելեկտրոսենսական արդյունաբերության համար։ Նրանից կարելի յետանալ թթվակայուն նյութեր, դիմացկուն մեկուսիչներ և այլ իրեր։ Այժմ Յերևանում կառուցվում ե բազալտ հալեցնելու գործարան՝ 35—40 տոնն տարեկան արտադրականությամբ։

Խորհրդային Հայաստանը նոր ինդուստրիա ստեղծեց։ Լենինականում կառուցվեց տեքստել կոմբինատ, Յերևանում կաշվի գործարան, պահածոների գործարան՝ 15 մելիոն տուփ արտադրականությամբ։

Վրականությամբ, սննդի կոմբինատ, մեխանիկական գործարան, մարմարի և ոնիքսի գործարան, փայտամշակման կոմբինատ (Կահկաբասիք հաճարենուց), Ղարաքիլիսայում ստեղծվեց քիմիական կոմբինատ։ Հայաստանի խորհրդայնացման տարեղաձի որը՝ նոյեմբերի 29-ին, սկսեց աշխատել Դավալվի ցեմենտի գործարանը, վորը տալու յետ տարեկան մի միլիոն տակառ ցեմենտ։

Ալլահվերդում ավարտվում ե պղնձաձուլարանի կառուցումը՝ տարեկան 15 հազար տոնն պղնձի արտադրականությամբ։ Զանգեղուրում կառուցվում ե Փլոտացիոն գործարան, վորի կոնցենտրատները ձուլվելու յեն Ալլահվերդում։

Յերկաբանական-հետախուզական աշխատանքները Հայաստանի տերիտորիայում Ագարակում, յերեան բերին պղնձի ու մոլիբդենի հարուստ հանքեր։

Հայաստանում հիմնական առաջատար արդյունաբերություն ե դառնում քիմիական արդյունաբերությունը։ Բացի Ղարաքիլիսայի քիմիական կոմբինատից, Յերեանում կառուցվում ե սինթետիկ կառուչուկի մեծ գործարան։ Նրա համար յելակետային հումք ե հանդիսանալու վոչ թե բուսական առարկա, այլ կարգի կալցիումը։ Այդ գործարանի շուրջը և նրա ավելցուկներից պատրաստվելու յեն կարբիդ-կալցիում, ացետիլեն, խրոմագիք, քաշիաթթու, քիմիական պլաստիկ մասսաներ և հիմնալի լակեր։

## 5. ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԾԱՂԿՈՒՄԸ

Վրացական մենշեկովի «Ճաղկման» շրջանում Թիֆլիսի մի խումբ թատրոնական գործիչներ գիմեցին ներքին գործերի միանիստը Խամիշվիլուն, խնդրելով, վոր նա ոգնություն ցույց տա թատրոնին Ստացվեց այսպիսի պատասխան։

—Բալետային մի ներկայացում յես գերազանցում եմ վրացական աղջային ամբողջ թատրոնից։

Ռամիշվիլու խոսքերն ու գործերը չեյին հակասում իրար Այժմ Վրաստանում կա 40 ազգային թատրոն՝ վրացական, հայկական, բուրքական, արխազական, ոսական, հունական և ուստական, Նրանց մեջ Ռուսթավելու անվան Թիֆլիսի պետական թատրոնը, վորին գեկավարում ե թատրոնական խոշորական թատրոնին, համամիութենական հոչակ և վայելում։ Այդ թատրոնը մեծ հաջողություններ և ձեռք բերել վոչ

միայն ստեղծագործական նոր ձևեր վորոնելու ասպարեզում, այլև յերեան ե բերել զգալի թվով տաղանդավոր պըրուհտարական դրամատուրգներ, ինչպես՝ Սամսոնիձեն և Մաշաշվիլին:

Թատրոնը կազմում ե Անդրկովկասի կուլտուրական մեծ շինարարության միայն մի ճակատամասը:

Գանձակում, մուսավաթական «ազգային» կառավարության սրտում, 1920 թվականին սովորում եր բնիկներից յերեք հոգի սեմինարիայում և 8 հոգի տարրական դպրոցում... Իսկ այժմ Գանձակում ավելի շատ թերթ ե հրատարակվում, քան սեմինարիայում և տարրական դպրոցում սովորող բնիկների ընդհանուր թիվը եր: Գանձակում հրատարակվում ե 12 տպագիր թերթ:

Յերկիրը գրագետ դարձավ: Անդրկովկասի միջինավոր կոլտնտեսականներ անցել են լիկայանները, իսկ Վրաստանում իրականացվել ե ընդհանուր պարտադիր ուսուցումը քառամյա դպրոցի սահմաններում:

Թիֆլիսում կա 15 ընդհանուր և տեխնիկական բարձրագույն ուսումնական հաստատություն, 20 հազար ուսանող, 2000 պըռաֆեսոր և գոցենտ բնիկներից: Վրաստանում կա 223 տեխնիկում, 168 գիտահետազոտական ինստիտուտ, 18 հազար կրթական հիմնարկ:

Իսկ քանի՞-քանի հազար անդրկովկասցի բանսորներ ու կոլտնտեսականներ են դաստիարակվում հրատարակող դրական ու ությամբ: Վրաստանի պետական հրատարակչությունը միմիայն 1932 թվականին վրաստանում բնակվող բոլոր ազգությունների լեզվով հրատարակեց 6.500.000 գիրք և դասագիրք: Վրացերեն հրատարակվել ե Մարգոսի վեցհատորյակը, հրատարակված են Էկոնոմ, Ստալինը, Անդրկովկասում հրատարակվում ե

79 վրացական թերթ, 77 թուրքական, 59 հայկական և մոտ 2 առանցյակ արխազական, մինդրելական, ոսական, ասորետկան, թալիշական, քրդական և հունական թերթ:

Գանձակի գրախանութում գուք կգտնեք Ալեքսանդր Բլոկի, Հանրի Բարբյուսի, Անատոլ Ֆրանսի, Մոռասունի, Եմիլ Շոլայի գրվածքները և համարյա ուսուական բոլոր կլասիկների և ներկայիս խորհրդային գրողների գրվածքները թուրքերն: Այդ գրախանութում ազգային բանաստեղծների ու գրողների աշխատափություններից կա առնվազն 3.000 գիրք, այն ե՛ Ռուսակը,

Եֆենդիյևը, Զհանգիրովը, Հուսեյինը, Մեխահուսը, Ռաֆիլին, Արդուլ-Թաղի-Ֆազին, Մուֆթիյեվը...

Գիտական դրամագույն արդեն տոկոսներ և տալիս: Միմիայն Հայաստանն իր բուհերից ստացել ե 355 գյուղատնտես, 743 ուսուցիչ, 296 բժիշկ և 78 ինժեներ: Նրանց մեջ քիչ չեն ազգային փոքրամասնությունների կանայք: Հայաստանի բուհերում սովորում են տեղական աղբություններին պատկանող 1012 աղջիկ:

Կանայք բուհերում: Իսկ վաղմաց ե արդյոք, վոր Անդրկովկասի կանայք իրավունք են ձեռք բերել տղամարդու հետ միշտույն սենյակում նստելու: Յեզ միթե նույնիսկ այս որերին Անդրկովկասայան ոյուղում այս կամ այն կոլտնտեսուհին, կողմնակի տղամարդ յերկալիս, չի շատպում թագնվել ցանկապատի հետեւ:

## 6. ԼԵՆԻՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Վրաստանի խորհրդայնացումից հետո լենինը պահանջեց ստեղծել Վրաստանի կարմիր բանակ և ուժիղացնել վերջինս: Ընդհանուր անդամության մեջ կա 1922 թ. փետրվարին: Բացարձակապես անհրաժեշտ ե, վոր Վրաստանի և որդենությունների համագումարում վորոշում ընդունվի Վրաստանի կարմիր բանակին անպայման ուժիղացնելու մասին... Թող սկզբում լինի մի բըրեպար, թող լինի նույնիսկ պակաս... Թերևս Ստալինը կավելացնի մանրամասնություններ՝ կատարման զինվորական տեխնիկական յեղանակների մասին:

Լենինի ղիբեկութիվը կատարվեց: Ստեղծվեցին կարմիր բանակի վրացական զորամասեր, Վրացական զորամասերն այժմ արդեն ունեն յերկու ղիբեկիս, հեծելազորային մասեր, տեխնիկական զորքեր, ամրացն, վորպես կարմիր բանակի մարտական միավորներ:

Վրացական զորամասերում կազմակերպված ե Վրաստանում բնակչությունների ոսերի, հայերի, արխազիներների մյուս ազգությունների և այլն 12 յենթաբաժանումներ:

26 կոմիսարների անվան անդրկովկասայան հետեակային գործոցում սովորում են 18 ազգությունների ուսանողներ, վորոնց գործոցում սովորում են 18 ազգությունների ուսանողներ, վորոնց գործոցի քրդեր, թալիշներ: Ուսումն ավանդվում ե չորս լեզվով՝ վրահաջ՝ քրդեր, թալիշներ:

ցերեն, հայերեն, թուրքերեն և ռուսերեն, Դպրոցում տրվող ընդհանուր զեկուցումների ժամանակ դահլիճը հիշեցնում է Կոմինտերնի Գործկոմի պլենումի նիստը՝ ուսանողները, լսափողեր հագած, լսում են դասախոսությունները՝ հենց տեղն ու տեղը թարգմանված կովկասի ազգային լեզուներով։ Անդրկովկասյան հետևակային դպրոցը, վորը հրաւանատարներ և քաղաշխատողներ ե պատրաստում վրացական, աղբբեջանյան և հայկական դորամասերի համար, այս տարի առաջին տեղը գրավեց կովկասյան կարմրադրոշ բանակում։

Դպրոցը գտաստիարակում ե մարտական հրամանատարներ, Որինակ՝ Վրաստանի կոմունիստ ընկ. Գվանցելաձեն, վորը կամավոր կերպով մտել ե Կարմիր բանակը, ավարտել ե Անդրկովկասի հետևակային դպրոցը։ Այժմ նա դասակի հրամանատար ե և նույն դպրոցում սովորեցնում ե ուրիշներին։ Նրա դասակն առաջին տեղըն ե գրավում։ Նա պարզեւարդիկ ե։ Թուրդ Սմոյեվը, դպրոցի ուսանող, կոմյերիտական, չքավոր ընտանիքից, շատ հաջող և սովորում։ Հայկական յերկրորդ գնդի քրդական վաշտը հայկական դիվիզիայի պարձանքն ե կազմում։ Նրա մարտական հրամանատարն ե նախկին հովիվ, քուրդ, բոլշևիկ, ընկեր Շամիր Թեյմուրովը։ Թալիշի վաշտը Աղբբեջանի առաջին գնդի լավագույն վաշտերից մեկն ե։ Նրա հրամանատարն ե Արդուլ Ալի Թաղիյեվը՝ նախկին չքավոր, կոմունիստ, ընդհանրապես առաջին թալիշ հրամանատարը Կարմիր բանակում։

Կովկասյան Կարմրադրոշ Բանակի ազգային գորամասերում ավելանում ե բանվորների ու կոմունիստների տոկոսը հրամանատարական կազմում։ 1926 թվականից կոմունիստների տոկոսն ավելացել ե՝ հայկական դիվիզիայում 26.-ից հասել ե 56.-ի, վրացական դորամասերում 30.-ից 64.-ի և Աղբբեջանի դիվիզիայում 19.-ից 70.-ի։

Խորհրդային Միության մեջ, Անդրկովկասյան ֆեդերացիայում, Կարմիր բանակում բազմուղդ կովկասի պատմության մեջ առաջին անգամն ե, վոր ազգային զորամասերում կազմակերպված կովկասյան յերիտասարդության ընդունակություններն ողտագործվում են փոխադաձ ոժանդակության համար, սոցիալիստական շինարարությանն ունելու համար, ամրող աշխարհի աշխատավոր ների հայրենիքը պաշտպանելու համար ահավոր զինված բռունցք ստեղծելու նպատակով։

## 7. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԸ

Վրաստանի մենշեկիլյան կառավարության ղեկավար Նոյ Փորդանիան՝ 1918 թ. հունիսի 16-ին «պարլամենտում» իր արտասանած ճառում ասաց. «Դուք կարծում եք, վոր յեթե կառավարությունը սոցիալիստական ե, ապա նա պետք ե իրականացնի սոցիալիզմը... Դա բոլցեիկների հայացքն ե... Իսկ մենք այլ կերպ ենք մտածում։ Մենշեկիլյան Վրաստանի արյունալի պատմությունը հաստատում ե այդ։ Դա հիանալի կերպով հասկացել եր Ֆոն-Կրեսսը, կովկասի դերմանական պատվիրակության նախագահը, այն ժամանակ, յերբ Վրաստանը դրավել ելին գերմանացիները։ Թիֆլիսից իր ուղարկած զեկույցներից մեկում 1918 թ. հունիսի 28-ին, մի փաստաթղթում, վորը միայն այժմ ե դուրս բերվել արմիվից և մեզ հաձնվեց Վրաստանի կենտրոնի քարտուղար ընկ. Ազնիաշվիլու կողմից և վորն առաջին անգամն ենք հրամարակում, զեներալ Ֆոն-Կրեսսը զրել եր. «Զափազանց հետաքրքիր ե զիտել, թե ինչպես սոցիալիստական գաղափարները քիչ են հարմարեցված կյանքին, հենց վոր դրանք սկսեցին իրականացնել գործնականություն։ Իրականում այդ պարոնները, պայմանների ճշշմարք, վաղուց արդեն դադարել են սոցիալդեմոկրատ լինելուց։ Միանգամայն բացառիկ դիպուկություն գերմանացի զեներալի համար։

Ֆոն-Կրեսսը 1918 թ. սեպտեմբերի 8-ին վարչապետին Թիֆլիսից իր զրած նամակում (վորն առաջին անգամ տպագրվում ե այսորվա «Պրավդա»-յում) առաջարկում ե պատվանշաններով պարզեւատրել մենշեկիլյան Վրաստանի մինիստրների նախագահ Ժորժանիային, արտաքին գործերի մինիստր Զինենկելուն, ներքին գործերի մինիստր Ռամիշվիլուն և Աղգային Խորհրդի նախագահ Զինեհձեյին։ Ենք նըանք արժանի ելին գերմանական իմպերիալիզմի այդ պատվանշաններին։ Մենշեկիլյար յեղայրասպան պատերազմներով կործաննելով Վրաստանն ու Անդրկովկասը, հավատարմորեն ծառայում ելին միջազգային իմպերիալիզմի Վրաստան ուղարկված հերթական ներկայացուցիչներին և ինչ վոր կարող ելին, մտակարարում ելին սպիտակ պվարդիական բանակներին։

Նույն այդ Զուղելին իր որագրում, գերմանացիների գնալուց հետո, զրում ե. «Յես ուրախ եմ, վոր գերմանացիները գնա-

ցին, բայց և այնպես շնորհակալ եմ նըանցից: Նըանք փրկեցին մեր յերկիրը... ձիշտ ե, նըանք վրաստանը փրկեցին իրենց համար, բայց և այնպես, փրկեցին...»:

Յեզ դեռ ասում են, թե լակեյները չգիտեն յերախտապարտ լինել...

Գերմանացիներից հետո վրաստան յեկան անողիական իմպերիալիստները: Յեզ Զուրելին իր որագրում 1919 թ. գետը վարի 24-ին գրում եր. «... Յես չեյթ ցանկանալ, վոր անողիացիները շուտով հեռանային»:

Բայց հարկադրված եյին հեռանալ բոլոր իմպերիալիստները: Մենշևկները նույնպես հարկադրվեցին հեռանալ: Նըանք թողին արյունաշաղախ, կործանված մի յերկիր: Նըանց տիրապետության ժամանակ նավթի հանույթը 7 միլիոն տոննից իջակ 2,5 միլիոն տոննի, մարդանեցի հանույթը նվազեց 11 տոննամ: Հայաստանի պղնձահանքերը հեղեղվել եյին ջրով:

Յեզ ելի հին եղ կառուցկին, վորը  $2\frac{1}{2}$ -րդ ինտերնացիոնալի պատվիրակության հետ 1920 թվի վերջերին այցելել եր Վրաստանը, գտնում եր, վոր մենշևկյան վրաստանը և Ավստրիան շատ հիանալի որինակ են բոլցերգմի դեմ, հոգուտ սոցիալ-դեմոկրատիայի: Ավստրիան, ինչպես և Գերմանիան, սոցիալ-դեմոկրատների յերկարամյա տիրապետությունից հետո ֆաշիստական դարձավ: Վրաստանի բանվորներն ու գյուղացիները ժամանակին վոնդեցին մենշևկներին և սկիզբը դրին սոցիալիստական բազմազդ Անդրկովկասի իսկական պատմության: Այդպես փոքր բանի վրա պատմությունն ստուգեց դասակարգային պայքարի և պըութարական հեղափոխության վիթխարի պըոբեմները:

Յերկըորդ հնգամյակը Անդրկովկասի առաջ նկարում ե նոր, սքանչելի ծիածանաթե հեռանկարներ, նոր նավթաշրջաններ, ու վոսկու հանույթի հսկայական աճում, նոր հղոր հիդրոկայաններ, ու և գունավոր մետաղաձուլման զարգացում (մեծ մետաղաձուլարանի կառուցումը հարուստ Դաշքեսանի մագնիստաքրի հանքերի բաղայի վրա), քիմիան, սինթետիկ կառուչուկը, գյուղատնտեսության հետադա ծաղկումը, ցամաքեցված կոլխիդը, համաշխարհային բուժավայրերի ծավալումը, բոլոր աշխատավորների կուլտուրայի ու բարեկեցության աճումը:

Հեղափոխության պայման կրակօվ վավերաց ե Խորհրդային Միության մարդարիտ Անդրկովկասը, վորպես մի կոչ և վորպես

մի որինակ գաղութային Արմելքի ճնշված բոլոր ժողովուրդների համար, վորպես Ստալինի քաղաքականության խորաթափանց հայացքի և բոլշևիզմի հաղթանակի փայլուն որինակ:

«Պրավդա»-ի բրիգադ՝

Գ. Վասիլկովսկի,

Ի. Ռանեվսկի,

Ա. Ագրանովսկի:

Քաղու—Թիֆլիս—Յերևան—Բաթում:

## ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՔԱՂԱՔՆԵՐՆ ՈՒ ԿՈՒՐՈՐՏՆԵՐԸ

Անդրկովկասի խուռոր քաղաքների բնակչության տեսք (հազարներով)

Տարբերակ	Բնակչութ	Գյանձակ	Թիֆլուս	Բնակչութ	Գումարվայիլ	Մուլտում	Ցեղահան	Լէնինձական
1922	337	40	234	61	45	17	47	45
1926	454	58	294	48	48	22	65	42
1931	584	75	350	57	60	30	91	53
1933	700	100	410	60	72	36	150	66

Խորհրդային իշխանությունը բարգավաճում բերեց Անդրկովկասի քաղաքներին:

Թիֆլիս: Նրա բնակչությունը վերջին 10 տարում (1923—1933) 234 հազարից հասավ 410 հազարի: Նույն ժամանակամիջոցում Փարբեկա-գործարանային արդյունաբերության ավելիքան 30 նոր ձեռնարկություններ առաջ յեկան: Այժմ Թիֆլիսում կառուցվում են մոտ յերկու տասնյակ փարբեկաններ և գործարաններ, վորոնց թվում.—Լեռնահանքային և նավթային սարքավորման գործարան, ավտոնորոգման գործարան, ալբաղացային կոմբինատ, մարդաբանի գործարան, կարի խոշոր փարբեկան տարեկան տասնյակ միլիոն ոռություն արտադրողականությամբ, մակարոնի մեծ գործարան՝ 16 հազար տոնն արտադրանքով:

Զագեսի եներգիան հրավառում և հնից գեր մնացած բոլոր ասիական փողոցներն ու նրբափողոցները, իսկ այս տարի գործարկված Նատախտարի ջրմուղը՝ 27 կիլոմետր յերկարությամբ՝ վերացնում է հին «ջուր չինելն ու քաղաքի հակասանիւտարական դրությունը»: Հին «մայդանի» կյանքն ել իր կեղտուա

արկդներով և ձեռքի առևտրով կարճացել եւ Այստեղ որինակելի բալնեոլոգիկ կուրորտ կկառուցվի:

Թիֆլիսի կոմունալ տնտեսության նվաճումներն անվիճելի յեն, սակայն դեռ հեռու յեն բավարար լինելուց: Համեմատած Անդրկովկասյան ֆեղերացիայի մյուս կենարոններին՝ նոր Թիֆլիսի շինարարությունը, վորպես յերեք հանրապետությունների մայրաքաղաքի, խիստ հետ և մնացել:

Անդրկովկասյան կուսակցական կազմակերպության ղեկավար ընկ. Յերիան իր յելույթներից մեկում՝ կուսակցության Թիֆլիսի կոմիտեյի և Թիֆլիսի խորհրդի միացյալ պեհնումում բոլցիկյան սուր քննադատության յենթարկից Թիֆլիսի խորհրդի աշխատանքը քաղաքային տնտեսության բոլոր բնագավառներում: «Թիֆլիսը ամենամոռ ժամանակում պետք եւ հատուկ կերպով փոխի իր դեմքը, դառնա խորհրդային Անդրկովկասին գայել մայրաքաղաքը»:


Անդրյերկումը, Աղբբեջանի ընկերների նախաձեռնությամբ, Թիֆլիսին ոգնելու հատուկ հանձնաժողով ստեղծեց: Յերեք հանրապետությունները, ամուր զոդված սոցալիստական կառուցմամբ, միացյալ ջանքերով ձեռնամուխ են լինում Թիֆլիսն որինակելի քաղաքը դարձնելու և մոտակա տարբիներում նրան հանելու և ՍՀՄ-ի լավագույն քաղաքների շարքը:

Թիֆլիսի հետ ամման և վերակառուցման տեմպով մրցում են Խորհրդային Հայաստանի մայրաքաղաք Յերևանը: Պատերազմի և հեղափոխության ժամանակ կիսավիր, բզկւյած, քանդված քաղաքն աննախընթաց յեռանդով հարություն և առնում դեպի նոր կյանք: Յերևանի բնակչությունը 1922—23 թվերի 47 հազարից այժմ հասնում եւ 150 հազարի:

Միշտ ավելի ուշ ավելի հեռու յեն նահանջում նախկին դադութային քաղաքի հին, խաղաղ, մոայլ ասիական «գեղեցկությունը», յերեան են գալիս ուղիղ, լայն փողոցներ, մեծ հրապարակներ: Ավտոների սուլոցները, արամվայի զանգերը, փարբեկագործարանային շահկները խախտում են հին, անընող խաղաղությունը: Նոր թատրոնների, կինոների, հյուրանոցների, բնակելի տների, կառավարական տնների շնոքերն իրենց գեղեցկությամբ և արդարակարների նրբությամբ, ճարտարապետական հղացման վարդանկարների հյուրությամբ, կարող են մրցել Մոսկվայի, Լենինգրադի և համարձակությամբ կարող են մրցել Յերևանի շուրջն անում են համամիութեալովի շնոքերի հետ: Յերևանի շուրջն անում են համամիութեալովի շնոքերի շնոքերի հետ:

Նական նշանակություն ունեցող արդյունաբերական ձեռնարկություններ (սինթետիկ կառուչուկի գործարան, քլորի գործարան): ԽՍՀՄ-ի քաղաքների ակնաշարում Յերևանը շուտով կփայլի վորպես ամենապայծառ մարդաբիտներից մեկը:

Բագուն Խորհրդային Միության նախթի մայրաքաղաքն է: Բազվի փողոցները ծածկված են ասֆալտով, Քաղաքի բոլոր ռայոններում աճել են կուլտուրայի վիթխարի պալատներ՝ թանգարաններով, գրադարաններով, ընթերցարաններով, հանդիսատեսների գահիներով։ Ֆաբրիկա-խոհանոցներն իրենց արտաքին և ներքին ձևավորմամբ քիչ են տարրերվում պալատներից։ Բայիլովի բանտի կողքին, ուր 1908 թվին նստել են նկ. Ստալինը, Նորելյան յեկեղեցու տեղում, բաձրացել և Անդրկովկասյան Գեղերացիայի տասնամյակի անվան դպրոց-պալատը, վորի մեջ սովորում են վեց ազգության յերեխաններ։ Քաղաքի, վերին մասում, ուր մոտիկ անցյալում 11 գերեզմանոց կար, կառուցվում ե միքանի բարձունքի պարտեղ՝ յենթաարևարձային բուսականությամբ։ Բազարնայա և Կոմունիստական փողոցների



Յերեվանի նորակառույց նյութանոցը:

անկյունում, միքանի տասնյակ գինետների ու «աշխանեների» (ճաշարանների) տեղ այս տարի բարձրացավ մամուլի պալատը, իսկ նրա շուրջը նոր, մի գիշերում ծաղկանոցի վերածված, հրապարակ ստեղծվեց։

Քաղաքը հեքիաթի ասածի նման և աճում։ Հղկած պողպատի նման փայլուն ասֆալտե ճանապարհները նրան միացնում են կանաչի մեջ թաղված բանվորական ավանների հետ։ Արմենիքների հետ, վորն արդեն միաձուլվել և քաղաքին, Ստեղան Ռազինի անվան, Մոնտինի անվան, Վորովսկու անվան ավանների հետ և այլն։

Իսկ ինչպես են աճել և ինչպես են մեծանում Անդրկովկասի մյուս քաղաքները՝ Գանձակը, Լենինականը, Քութայիսը, Բաթումը։ Ի՞նչ ընդհանուր բան կա Ադրբեյջանի ներկայիս արդյունաբերական յերկու կենտրոնի՝ Գանձակի և հին նահանգական քաղաք Յելիզավետպոլի միջև, ներկայիս Լենինականի և հին Ալեքսանդրապոլի միջև։ Քաղաքները մեծանում են, վորովհետեւ բնության մեռած հարստությունները կյանքի յեն կոչված, վորովհետեւ Անդրկովկասի ժողովուրդները բոլշևիկների ղեկավարությամբ սոցիալիզմ են կառուցում։


Անդրկովկասի կուրորտները... Իշխանների և կալիստալի մագնատների տիրակալած Բորժոմից, Սուխումից և Արտա-Թումանից բացի, վեր բուժավայրերն եյին գործում։ Յեկ վոչ մեկը։

Այժմ միայն վրաստանում պետական նշանակություն ունեցող 13 կուրորտ կա, 25 տեղական նշանակության կուլուտ և ավելի քան 300 բուժավայր։ Կուրորտային շինարարությունը և ծավալմել ե լայն ֆրոնտով և թեև նրա տեմպը խիստ հետ և մեռում, սակայն և այսպես քիչ նոր բան չի ստեղծված։ Աջարբառանի վողջ ծովագին՝ Կորուլիաց մինչև Բաթում, Բաթումից մինչև Փոթի, Փոթից՝ մինչև Սուխում, վողջ յենթաարևադաշտին գոտում փոլվել են տասնյակ և հարյուրավոր սանատորիաներ, հանգստյան տներ, պանսիոնատներ, պոլիկլինիկներ։ Տասնյակ հաղարավոր բանվորներ այսեղ հանգստանում, բուժվում են։ Յուլիուրո կուրորտը թաղնված ե գեղանկար խոր հովտում, շրջապատված հարյուր մետրանի բլուրներով, Քութայիսից 12 կիլոմետր հեռու։ Այսեղ հողից իբրև շատրվան խփում ե տաք (մինչև 35 աստիճան) սաղիուակիվ ջուր, վորի բուժիչ ուժը շատ

մեծ եւ Առանձին աղբյուրների ուսղիուակտիվությունն այնքան ուժեղ ե, վոր ուղիումի ազդեցությունից ժամացույցի ընթացքը և ռադիոաղարատների աշխատանքը խանգարվում ե:

Վերջին տարիներին (1930—33) ընթացքում ջղալ-թուրո կուրուրատում տարեկան արդեն մոտ 30 հազար հիվանդներ են բուժվում:

Հայաստանի կուրորտների մասին առաջ ընդհանրապես վոչինչ հայտնի չեր: Այժմ Խորհրդային Հայաստանում Սևան-Զանգուկասկադի կառուցվող հիվրոկայանի—Քանաքեռզեսի մոտ աճում է համամիութենական նշանակություն ունեցող Արգիլ կուրորտը: Հայաստանի աշխատավորության մեջ նա արդեն արժանի հոչակ և վայելում: Այդ կուրորտի հանքային ջրերն իրենց բովանդակած հատկություններով ու ուժով հայլասար են Կիսլովոդսկի նարզանին և հետ չեն մնում Կիսախնդենի «Ռակոչի» աղբյուրի ամբողջ աշխարհին հայտնի ջրերից: Խորհրդային Հայաստանի այդ լեռնային գեղանկար վայրում մատիկ տարիներում կաճի յերկրորդ կիսլովոդսկը:



Արգիլ կուրորտը

## ՎՐԱՍՏԱՆԻ ՆՅԱԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ

Ն. Ի. ՄՈՒՍԻՆԵԼԻՇՎԻԼԻ

Ն. Ի. Մուսինելիշվիլին մաթեմատիկոս ե, վորը հանրածանոթ ե թե մեր Միության մեջ և թե նրա սահմաններից գուրս: Նրա հետազոտությունները վերաբերում են զլբավորապես մաթեմատիկական ֆիզիկային: Նրա մշակած մեթոդները կիրառվում են և շատ արժեքավոր արդյունքներ են տվել առաձգականության թեորիայում և հիգրոդինամիկայում: Մուսինելիշվիլու բազմաթիվ ուսումնասիրությունները, վորոնք վերաբերում են մաթեմատիկայի տարբեր բնագավառներին, հրապարակված են խորհրդային և արտասահմանյան զանազան հրատարակություններում:

Ն. Ի. Մուսինելիշվիլին յերիտասարդ գիտական կագըրի փայլուն ղեկավար ե: Նրա ստեղծած յերիտասարդ մաթեմատիկունների մի ամբողջ յերեկի խումբ արդեն դուրս են յեկել գիտական ստեղծագործության լայն ասպարեզ:

Ն. Ի. Մուսինելիշվիլին կանգնած և Թիֆլիսի պետական համալսարանի ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետի և համալսարանին կից Վերջերս կազմակերպված Մաթեմատիկայի և մեխանիկայի գիտա-հետազոտական ինստիտուտի ղլուխ:

Ն. Ի. Մուսինելիշվիլին միաժամանակ Դիտությունների համամիութենական ակադեմիայի աստիճանատուրայի անմիջական ղեկավարներից մեկն և զլբավորում ե այսեղ առաձգականության թեորիայի սեմինարը: 1932 թվին նա ընտրվեց Գիտությունների ակադեմիայի անդամ-թղթակից:

ՊՐՈՖ. Ա. Ա. ՏՎԱԼՉՐԵԼԻՁԵ

Պրոֆ. Ալեքսանդր Անտոնովիչ Տվալչրելիձեն 1919 թվից գրավում ե Թիֆլիսի պետական համալսարանի հանբանության ամբիոնը, իսկ 1930 թվից աշխատում ե Անդրկովկասյան լեռնաշանքարանական ինստիտուտում:

Ա. Ա. Տվալչընիձեն Անդրկովկասի հանքային հարստությունների խոշորագույն գիտակն է: 1927 թ. նա Բագվի և Բաթումի նավթային լաբորատորիաներում խոշոր աշխատանք կատարեց սպիտակին տվող կավերի տեխնիկական հատկությունները պարզելու գործում: 1928 թվին պրոֆ. Ա. Ա. Ֆիլատովի հետ միասին Փլորիդինի լաբորատորիա կազմակերպեց Թիֆլիսի համալսարանին կից, վորը հետո վերակառուցվեց և դարձավ Կիրառական հանքարանության ինստիտուտի վրացական բաժանմունք: 1929 թվի ամռանը Ա. Ա.-ն «Ստանդարտ ոյլ-կոմպանի» կոնցենտրոն գործարանում գումարինով նավթը զտելու խոշոր գործարանային փորձեր կատարեց, վորոնք վերջնականապես պարզեցին գումարինի տեխնիկական արժանիքները: Այժմ Փլորիդինի ներմուծություն Ամերիկայից միանդամայն դադարեցված է և «Աղնելիթն» այժմ իր նավթամթերքները զտում են գումարինի ողնությամբ:

Պրոֆ. Ա. Տվալչընիձեն 1931թվին 5,000 ռուբլի պարզե ստացվ սպիտակեցնող կավերի (գումարին, ասկանիա) աշխատանքի համար, իսկ 1932 թվին հարվածային պատվո գիր ստացավ լեռնային արդյունաբերության շահերին սպասարկելու աշխատանքների և կագրեր պատրաստելու համար:

1930 թվին վորոշվեց Լուսունիս-Ցղալի գետի վերին հովտում հայտնաբերված արսենիկումի հանքավայրերի արդյունաբերական բարձր նշանակությունը, վորոնք հետազոտված են Տվալչընիձեյի ղեկավարությամբ: Այդ հանքերը պարունակում են վոսկու և ածաթի ամենամեծ խառնուրդ:

### ՊՐՈՓ. Ի. Ա. ԲԵՐԻՏԱՑՎԻԼԻ (ԲԵՐԻՏՈՎ)

Պրոֆ. Ի. Ա. Բերիտավիլին գրավում է Թիֆլիսի համալսարանի բնագիտական ֆակուլտետի կենսաբանության ամբիոնը և համալսարանին կից Ենապետիմենտալ կենսաբանության ինսիտուտի ղերեկուրն ե, անմիջականորեն ղեկավարում են նրա ֆիզիոլոգիական բաժանմունքի գիտական աշխատանքները:

Պրոֆ. Բերիտացվիլին միշտ գործնական մասնակցություն ե ունենում ֆիզիոլոգների միջազգային, համամիութենական և կովկասյան համագումարներին, ուր նա յելույթներ և ունենում եքսպերիմենտալ և մեթոդոլոգիկ բովանդակության զեկուցումներով: Բերիտացվիլու գիտական գործունեյությունը բազմակողմանի յեւ:

Նա սկսեց նյարդային և մկանային սիստեմների ու վողնուղեղի տարրական պրոցեսների ուսումնամասի բությունից, ապա անցավ տոնիկական ռեֆլեքսներին, հետագայում ուսումնամասի բությունի կեղակի գործունեյությունը, և այդ բոլոր բնագավառներում գիտական տեսակետից նոր ու արժեքավոր բան ե տվել:

1930 թվից պրոֆ. Բերիտացվիլին ուժեղ թափով աշխատում է մկանային և նյարդային սիստեմի ընդհանուր ֆիզիոլոգիայում դիալեկտիկական մատերիալիզմի կիրառման վրա: Նա գլուխ-զլուխ նորից վերամշակում են նյարդա-մկանային սիստեմի ամբողջ ֆիզիոլոգիան, արդյունքները շարադրելով ֆիզիոլոգների համագումարներում կարգացած զեկուցումներում և այժմ տպագրած ընդհանուր ֆիզիոլոգիայի ձեռնարկներում՝ վրացերեն և ռուսերեն լեզուներով:

Պրոֆ. Ի. Ա. Բերիտացվիլու աշխատանքները տպագրվել են վրացերեն, ռուսերեն, գերմաներեն և ֆրանսերեն: Նրա լաբորատորիայից ընդամենը հրապարակվել է մոտ 140 աշխատանք, վորից 100-ից ավելին պատկանում են անհատապես իրան, իսկ մեացածը՝ նրա աշխատակիցներին: Այդ աշխատանքների կեսից ավելին տպագրված են արտասահմանյան ամսագրերում: Ի. Ա.-ի աշխատակիցներից հայտնի յեն դարձել Գ. Գեղեկվանին և Ա. Բերգանն, վորոնք արդեն կարողացել են մի շարք ինքնուրույն արժեքավոր գիտական աշխատանքներ տալ:

# ԳԵՐՄԱՆ ԳԵՆԵՐԱԼՆԵՐՆ ԻՆՉԻ ՀԱՄԱՐ ԵՅԻՆ ՈՒԶՈՒՄ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼ ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻՆ

Կովկաս ուղարկված գերմանական պատվիրակության դեկանավար  
Ֆոն-Կրեսսի 1918 թվականի սեպտեմբերի 8-ի զեկույցը.

Թիֆլիս 8/IX 1918 թ.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

Զերդ գերազանցություն:

Վրաստանի պետության առաջիկա պաշտոնապես ճանաչ-  
ան առթիվ պատիվ ունիմ առաջարկ ներկայացնելու, վոր ցան-  
կալի կլիներ գերմանական պատվանշաններ նվիրել Վրաստանի  
զեկավար անձնավորություններին: Ինձ անհայտ չե, վոր յերի-  
տասարդ պետության կառուցման ու ներքին ամրացման գործուն  
այդ պարոնների ցուցաբերած ծառայությունները չեն կարող  
առանձնապես մեծ շնորհակալություն պահանջել: Սակայն այն  
փաստը, վոր Վրաստանի կառավարությունը ձգտել և սերտ հա-  
րաբերություններ հաստատել Գերմանիայի հետ և վոր մինք  
բռնեցինք մեղ մեկնած ձեռքը, իմ կարծիքով, պարտավորեցնում  
և մեղ՝ հարմար բողեյին, թեկուզ հենց արտաքուստ, շեշտել այդ  
յերկու յերկրների միջև հաստատված հատուկ հարաբերություն-  
ները, մանավանդ վոր այստեղ, ինչպես ամենուրեք Արևելքում,  
իրերի մասին դատում են նախ արտաքին կողմից: Համենայն  
դեպք մեր շահերը պահանջում են խուսափել, վոր Ավտորու-Հունդա-  
րիան կամ Թյուրքիան կանխեն մեղ այդ գործում և այդպիսով  
մենք մնանք մերջին պլանում՝ այդ պետություններից հետո:  
Պարզեատրման ներկայացնելու համար յես առաջին հեր-

թին առաջ եմ քաշում այն մարդկանց խումբը, վորոնց հիշատա-  
կում եմ ստորև ըստ խմբերի, նայած նվիրելիք պատվանշանի  
աստիճաններ, Յես կարծում եմ անհրաժեշտ չե, վոր այստեղ յես  
վորոշեմ, թե ինչպիսի պատվանշաններ պետք են նվիրել առանձին  
խմբերին, վորովհետեւ յես լավ իրազեկ չեմ այն ընդհանուր տե-  
սականների խնդրին, վորոնք վճռական դեր են խաղում այդ  
հարցը լուծելիս:

1. Մինիստր նախագահ Ժորդանիս:

2. Արտաքին գործերի մինիստր Ջինիսենի, ինչպես և նրա  
տեղակալ ու ներքին գործերի մինիստր Ռամիլսիլի: Ապա Ազգա-  
յին խորհրդի նախագահ Ջինիլան: Քանի վոր Ազգային խորհուր-  
դը ներկայում կարելի յե դիտել վորպես պետության գերիշ-  
խանության կրողը, Ջինիլանին հասնում և պարզեատրության  
նույնպիսի աստիճան, ինչպես պարոններ Ջինիլանուն ու Ռամիլ-  
լուն:

3. Հետեւյալ մինիստրները, վորոնք նախ կարեոր են մեղ  
համար՝ գերմանական կառավարության հետ միատեղ աշխատանք  
կատարելու համար:

Զինվորական մինիստր Գեորգաների մինիստր  
Ժուրուլի, Յերկաթուղիների մինիստր Լորդիպանին: Ապա  
Ազգային խորհրդի փոխնախագահ Բարատավիլի:

4. Հետեւյալ բարձրաստիճան սպաները:

Զինվորական մինիստրի ողնական՝ գեներալ-մայոր Գեղե-  
վոնով, Գլխավոր շատրի պետ՝ գեներալ-մայոր իշխան Անդրօնի-  
կով:

5. Վորպեսզի ցույց տանք ժողովրդին, վոր Գերմանիան  
մի կուսակցության և նույնիսկ տիրապետող կուսակցության  
կողմը չե պահում, այլ ցանկանում է ողնել պետությանը՝ վոր-  
պես այդպիսին, յես ցանկալի յեմ համարում պատվանշաններ  
նվիրել նաև ոպողիցիայի միքանի առաջնորդների: Առաջին հեր-  
թին պետք ե ուշադրություն նվիրել նաև ձեր գերազանցությանը  
հայտնի նացիոնալ-դեմքրատական կուսակցության առաջնորդ  
Սպիրիդոն Կելիխալին, ապա իշխան Վաչենամելին, աչքի առաջ ունե-  
նալով վերջինիս յուրահատուկ դիրքը, վորպես կուսակցության  
ներկայացուցիչը բանակի վերակազմության հանձնաժողովում:

Պատվանշանների աստիճանների հարաբերությունն առան-  
ձին խմբակների միջև.—ամենաբարձր աստիճանն՝ առաջին խմբա-

կին: Մի քիչ փոքր աստիճան՝ յերկըորդ խմբակին: Նույն աստիճանը, սակայն մի քիչ ցածր՝ յերրորդ և չորրորդ խմբակներին: Այդ յերկու խմբերը, մեր կարծիքով, անհրաժեշտ են դնել հավասար աստիճանի վրա:

Շատ շնորհակալ կլինեյի ձերդ գերազանցությանը, յեթե հաղորդեյիք, թե համաձայն ե արդյոք կայսերական կառավարությունը քննարկել իմ առաջարկը: Նույնպես համաձարկվում եմ ձերդ գերազանցությանն ասել, վոր այդ հարցում անհրաժեշտ ե նախադիս համաձայնության գալավարություններական կառավարության Է և Ե-ի հետ: Յես յելնում եմ այն նկատառումներից, վոր Ավատրո-Հունգարիայի այստեղի Է և Աներկայացուցիչը չափազանց լոյալ վերաբերունք ե ցուցաբերում գերմանական նկատվերակությանը, և այն արժեքավոր աջակցությունը, վոր միշտ ցուցաբերել ե նա այստեղի կառավարության հետ վարդելու գործում, արժանի յեւ հատուկ ուշադրության:

Ֆոն-Կրես:

## „ՊՐԱՎԴԱ“-ՅԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ՀԱՄԱՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՂԻ ՅԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՐ(Բ)Կ-Ի ԱՆԳԻՑԵՐԿԱՄԻ ՎԱՐՈՇՈՒՄԸ

«Պրավդա»-յում հրապարակված առաջնորդողը և նյութերը, վորոնք կուսակցական քաղաքական կարևորագույն նշանակություն ունեն ամբողջ անդրկովկասյան կուսկազմակերպության համար, Անդրկովկասի բոլշևիկներից պահանջում են ավելի հրատակ, շերտագրված, ոպերատիվ գեկավարություն, պահանջում են ուժեղացնել անդրկովկասյան կուսկազմակերպության աշխատանքը՝ սոցիալիստական շինարարության բոլոր ճակատամասերում, պարտավորեցնում են յերկրի բոլոր կուսկազմակերպություններին՝ ավելի մեծ յեռանդով ու խանդավառությամբ պայքար մղել նավթի, մանգանի, բամբակի, թեյի ու ցիտրուսների համար, յերկրի տնտեսական ու կուլտուրական աճման, իրենց շաքերի ել ավելի կոնսոլիդացիայի համար և խորհրդային Անդրկովկասը գերածելու որինակելի հանրապետության ամենակարևոր համար է:

Առաջարկել յերկրի բոլոր կուսկազմակերպություններին՝ բոլոր կենտրոնացնել բոլոր տնտեսական պլանների ժամանակեն ու լրիվ կատարելու վրա, հաղթահարել և վերջնականապես վերացնել այն թերություններն ու բացերը, վորոնք դեռ գոյություն ունեն Անդրկովկասյան կուսկազմակերպության աշխատանքում:

Առաջարկել հանրապետությունների կենտրոնացներին, մարդկության բոլոր կուսկազմակերպություններին և ընդկոմներին՝ բոլոր բջիջներում և կուսակցական լուսավորության ցանցում մշակել «Պրավդա»-յի վերահիշյալ նյութերը՝ կուսակցության 17-րդ համագումարին նախա-

պատրաստվելու տեսակետից, ծավալելով բոլցելույան ինքնաքըն-  
նադասություն՝ մեր բոլոր թերությունների շուրջը:

Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունը և կու-  
սակցական շարքերը՝ դաստիարակված ընկ. Ստալինի անմիջա-  
կան ղեկավարությամբ, ել ավելի կսեղմեն իրենց շարքերը լե-  
նինյան կենտկոմի և կուսակցության սիրելի առաջնորդ ընկ.  
Ստալինի շուրջը՝ կուսակցության առաջ կանգնած բոլոր խնդիր-  
ների իրականացման համար մղվող պայքարում, կուսակցու-  
թյան հիմնական գծի համար մղվող պայքարում:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

62

Յոթից մեկը	7
Ամրանում և Միության բամբակագործական յերկրորդ բաղան	12
1. Բերիստ—Անդրկովկասի բոլցելուները Համե(ր)կ կենտ- կոմի վորոշումների կենսագործման պայքարում.	20
Կորհրդային Անդրկովկասը	
1. Վառվում են կրակները...	32
2. Փաստական հավասարություն	36
3. Գիտեն դու այն յերկիրը...	40
4. Խնդուսարիալ հզորությունը	43
5. Կուլտուրայի ծաղկումը	47
6. Լենինը Վրաստանի Կարմիր բանակի մասին	49
7. Խորհրդային Միության մարգարիտը	51
Անդրկովկասի քաղաքներն ու կուրորտները	54
Վրաստանի նշանավոր գիտնականները	
Ն. Ի. Մուսիելիշվիլի	59
Պրոֆ. Ա. Ա. Տվալչըրելիձե	59
Պրոֆ. Ի. Ա. Բերիտաշվիլի (Բերիտով)	60
Գերման գեներալներն ինչի՞ համար եյին ուզում պար- գևատրել մենչեւիներին	62
«Պրավդա»-յի ղեկանմբերի 1-ի համարի առաջնոր- դողի և նյութերի մասին	65

Թարգմանիչ Հ. Թուրշյան

Խմբագիր Միմակ

Մորագրիչ Ա. Տ.-Մկրտչյան

Հանձնութեաց Յ Փետրվարի 1934 թ.

Տպակը բաւլարդից 17 փետրվարի 1934 թ.

Հքաս. № 176 Գլավիկ № 7813 (թ). Պատճեր № 43.

Տրամ 2,000 րդրի չափոր և 62 սմ.

2½ րդրի թեր, 4½ սպ. թեր. (1 սպ. թերութ 155,000 սպ.  
նշան)

ԿՈՒՍԴՐՈՒՏ ՏՊԱՐԱՆ, ԵԵԲՆԱԿ, ԱԼԻՎԵՐՋՄԱՆ, 27

Переводчик А. Туршян

Редактор Симак

Карректор А. Т.-Мкртчян

Сдано в набор 3 февр. 1934 г.

Подписано к печати 17 февр. 1934 г.

Изд. № 176

Типография Партиздана ЦК КП(б)А

Эривань, Аллавердян, 27

(3)



ԳԻՒԾ 1 Ա.

K  
n-63

„ПРАВДА“ О ЗАКАВКАЗЬЕ

Партиздан Эривань 1934 г.